ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> 11 2012թ. N: 308-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԲԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՌՈՒԲԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Ռուբիկ Ստեփանյանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2012 թվականի նոյեմբերի 30-ից զբաղեցրած պաշտոնից ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անուշավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Ռուբիկ Ստեփանյանին:

2. 2012 թվականի նոյեմբերի 30-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անուշավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Ռուբիկ Ստեփանյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է